Արձանագրություն

ԵՊՀ Ժուռնալիստիկայի ֆակուլտետի գիտխորհրդի 2023 թ.

փետրվարի 24-ի թիվ 5 նիստի

ԼՍԵՑԻՆ. - Ժուռնալիստիկայի ֆակուլտետի ուսանողների 2021-22 ուստարվա հարցման տվյալների ամփոփման մասին դեկան Ն. Մարտիրոսյանի հաղորդումը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. - Դ. Վ. Պետրոսյան, Ա. Ռ. Մենեմշյան, Ն. Է. Վարդանյան, Մ. Վ. Կուրեխյան, Լ. Ս. Խաչատուրյան:

ՈՐՈՇԵՑԻՆ. – Հաղորդումն ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ. - Ժուռնալիստիկայի ֆակուլտետի գործողությունների պլանավորման ժամանակացույցի վերաբերյալ Ն. Վարդանյանի հաղորդումը:

Ներկայացվեց գործողությունների պլանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. - Ն. Ն. Մարտիրոսյան, Դ. Վ. Պետրոսյան, Ա. Ռ. Մենեմշյան: Ելույթ ունեցողներն անդրադարձան ֆակուլտետի անվան և կառուցվածքի վերանայման անհրաժեշտությանը, խոսեցին փաստերի ստուգման լաբորատորիան կյանքի կոչելու առաջնահերթության մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ. – ԳԽ հաջորդ նիստին ամփոփել ստացված առաջարկությունները և դիմել ԵՊՀ ռեկտորին համապատասխան գործընթաց սկսելու առաջարկությամբ:

ԼՍԵՑԻՆ. – ԵՊՀ գիտական խորհրդի ընտրովի անդամի առաջադրման և ընտրության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. - Ն. Ն. Մարտիրոսյան, Զ. Զ. Սարգսյան, Ա. Ռ. Մենեմշյան:

Ելույթ ունեցողներն առաջադրեցին Նոր մեդիայի և հաղորդակցության ամբիոնի վարիչ, բ. գ. դ., պրոֆեսոր Դ. Պետրոսյանի թեկնածությունը: Այլ առաջադրումներ չեղան: Նախագահող Ն. Մարտիրոսյանն առաջարկեց անցկացնել բաց քվեարկություն: Քվեարկությանը մասնակցեցին նիստին ներկա բոլոր անդամները:Նրանք միաձայն կողմ քվեարկեցին Դ. Պետրոսյանի թեկնածությանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. – Հիմք ընդունելով քվեարկության արդյունքները՝ ԵՊՀ գիտական խորհրդի ընտրովի անդամի տեղի համար առաջադրել Դ. Վ. Պետրոսյանի թեկնածությունը:

ԼՍԵՑԻՆ. – Դեկանի տեղակալ Ա. Մենեմշյանի հաղորդումը լուծարքային առաջին շրջանի ամփոփման մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ. – Հաղորդումն ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ. – Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի մասին Ն. Մարտիրոսյանի և Դ. Պետրոսյանի հաղորդումը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. - Ն. Է. Վարդանյան, Զ. Զ. Սարգսյան, Ա. Ռ. Մենեմշյան, Մ. Վ. Կուրեխյան, Մ. Ս. Մկրտչյան:

ՈՐՈՇԵՑԻՆ. – Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման ընթացքը գնահատել բավարար:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ն.Ն. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Զ. Զ. ՍԱՐԳՍՅԱՆ